Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց
Առարկա՝ Երաժշտություն
Թեմա՝ Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը երաժշտական խաղերի կիրառմամբ
Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան
Ուսուցիչ՝ Սուսանա Ղալումյան

Բովանդակություն

1. Ներածություն..... 3

2. Արժեքային համակարգի ձևավորումը երաժշտության դասաժամերին.....5
3. Երաժշտական խաղերի նկարագիրը.....7
4. Խաղերի կիրառումը երաժշտության դասաժամերին.....11
5. Եզրակացություն.....14
6. Օգտագործված գրականություն.....16

Ներածություն

Երաժշտությունը, ինչպես արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունն առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնարտահայտվելու և մյուսներին հասկանալու համար: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ անհատի ձևավորման և զարգացման վրա՝ տարբեր գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ունակ է ամբողջ կյանքում ինքնակրթվել: Այն նպաստում է սովորողներին մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրության և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի ձևավորմանը: [1]

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ մարդկությանը ոչ միայն նյութական և հոգևոր արժեքներ է թողնում, այլև կերտում է որոշակիորեն ձևավորված անձ, որն իր մշակույթի ստեղծողն է և միաժամանակ կրողը: Անձի երաժշտական մշակույթը նրա ներդաշնակ զարգացման կարևոր պայման է: Երաժշտությունը արվեստի այն առանձնահատուկ տեսակն է, որում ամփոփված են մարդու իմացական, հուզական,գեղագիտական լիցքերը, մեղեդու ռիթմի և ներդաշնակության մեջ խտացած է ժողովրդի հոգևոր մշակույթի ողջ գունագեղ երանգապնակը:[2]

Դպրոցականների երաժշտական մշակույթի ձևավորման և զարգացման խնդիրը կրթադաստիարակչական գործընթացում առաջնային նշանակություն ունի: Արժեհամակարգի ձևավորման և վերջինիս հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված–հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:[3]

---

[1] https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf
[2] https://aspu.am/website/images/files/Manukyan%20Elen.pdf
3 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երաժշտության դասաժամերին արժեհամակարգի և նրա բաղադրիչների ձևավորումը, երաժշտական խաղերի միջոցով զարգացնել ժողովրդի երաժշտական ավանդույթների,բնության հետ հերդաշնակության,կյանքի և երաժշտության կապի, աշխարհի գեղագիտական, հուզական ընկալման և երաժշտական ստեղծագործության գնահատման ունակությունը:

Աշխատանքի ընթացքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտել և համակարգել արժեհամակարգի այն բաղադրիչները, որոնք հնարավոր է ձևավորել երաժշտության դասաժամերին
2. երաժշտության դասագրքերում առկա տեսական նյութին զուգահեռ կիրառել երաժշտական խաղեր, որոնք կնպաստեն սովորողների մոտ երաժշտական հաշակ, լսելու և ունկնդրելու ունակություն,հաղորդակցման շատ արժեքավոր հմտություններ և ի վերջո երաժշտական մշակույթ
3. ամփոփել և վերլուծել ստացված արդյունքները:

Արժեքային համակարգի ձևավորումը երաժշտության դասաժամերին

Հանրակրթության պետական ներկայիս չափորոշիչը սահմանում է հանրակրթական միջնակարգ կրթության հիմնական ծրագրի շրջանավարտի ակնկալվող կարողունակություններըէ կոմպետենցիաներ, նախկին կարողությունների և հմտությունների փոխարեն: Շրջանավարտների ներկայացվող որակական պահանջները կառուցված են կարողունակությունների՝ գիտելիք, վերաբերմունք, արժեհամակարգի հիման վրա: Մարդկանց կյանքի ուսումնասիրումը ժամանակակից հանրակրթության անբաժանելի մասն է: Դա համապատասխանում է դպրոցից ժամանակակից հանրության սպասելիքներին, ինչպես նաև սովորողների՝ շրջապատող աշխարհն ու ինքն իրեն հասկանալու անձնական պահանջմունքներին:

Ավելորդ է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ սոսկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույնս ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Երեխաների հետ աշխատանքում օրեցօր ավելի է արժևորվում արվեստի զարգացնող նշանակությունը ստեղծագործ անհատի, մարդու ձևավորման գործում: Կրտսեր և միջին դպրոցականների տարիքները անձի կայացման կարևորագույն փուլերից են: Այս ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից այնպիսի մի շրջանի անցում, երբ անհրաժեշտություն է առաջանում ներ դերեր ստանձնել, պատասխանատվություն կրել, տարբեր պահանջներ իրականացնել:

Այս տարիքի երեխաների զարգացման հիմնական բնութագրիչներից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, սակայն պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ:[4]

Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը հանդիպում է այն փաստին, որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր անհատական աշխատանքի ոճը, իր ուրույն բնավորությունն ու խառնվածքը, աշխատանքային տեմպը և այլն:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

[4] Ա. Միրիջանյան «Երաժշտական խաղերը՝ որպես դեռահասի երաժշտական կարողությունների զարգացման լավագույն միջոց»,Նախաշավիղ 4.2016 էջ 29-34

Երաժշտության դասավանդումը կարող է հզոր միջոց լինեն աշակերտների գեղագիտական դաստիարակության գործում:

Գեղագիտական դաստիարակության համար շատ կարևոր է սովորողների մեջ դաստիարակել արժեքներ և զարգացնել նրանց արժեքային համակարգը: Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:

Երաժշտական խաղերի նկարագիրը

Խաղը որպես մեթոդական գործիք կամ հնար ուղղված է երևույթների խաղային մոդելավորման ճանապարհով դրանց պատճառների, զարգացման ընթացքի և վերջնարդյունքի արագ ընկալմանն ու վերլուծական դաշտի ստեղծմանը: Այսօրվա իրականության մեջ շատ գործընթացներ «տեսանելի» դարձնելու և և դրանք սովորողների կողմից ընկալելի դարձնելու համար խաղային մոդելավորումը շատ արդյունավետ է: Երաժշտության դասաժամերին խաղային մեթոդների առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս բոլոր սովորողներին ներառել ուսումնական պրոցեսում՝ բացառելով որևէ մեկի առաջնայնությունը, արդյունքում զարգացնելով խմբային մտածողությունը, ինչի արդյունքում աշակերտները կարողանում են ինքնարկել այլընտրանքային տեսակետներ, ընդունել կշռադատված որոշումներ: Երաժշտական խաղերը լինում են մի քանի տեսակ՝ միտված երաժշտական լսողության և ռիթմի, հիշողության, հնչյունի բարձրության, տեմբրային լսողության զարգացմանը: Դրանք նպաստում են ռիթմական զգացողության, լսողության, երաժշտական հիշողության զարգացմանը:

Պարը, խաղը, ասմունքը երգն ու մարզանքը պետք է դիտել երաժշտության դասավանդման համազոր ու հավասար միավորներ:

Հանրակրթական դպրոցում «Երաժշտություն» առարկայի դասավանդման նպատակն է՝ դաստիարակել հոգևոր և բարոյա- գեղագիտական արժեքներով օժտված մարդ, ակտիվ ունկնդիր, ով կարող է արժևորել իր ազգային և համամարդկային երաժշտական մշակույթը: Քանի, որ շարժումը,խաղը և պարը երեխաների տարերքն են, ֆիզիոլոգիական պահանջ՝ աճող օրգանիզմի համար, դրանք երեխաների երաժշտական դաստիարակության կարևոր տարրերն են դառնում և լայնորեն կիրառվում են մանկավարժական գործունեության ընթացքում:

Նպատակաուղղված խաղերը աշակերտներից պահանջում են մտքի,ուժի լարում, [5]որը և ձևավորում է նրանց մեջ տոկունություն, ինքնուրույնություն,հնարամտություն, հարպկություն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երաժշտական խաղերին, որոնք նպաստում են աշակերտների երաժշտական և տեմբրային լսողության, ռիթմի, ինքնուրույն մտածելակերպի զարգացմանը: Երաժշտական խաղերը նպաստում են նաև երաժշտության դասավանդման արդյունավետ ուսուցմանը: Խաղերի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ խնդիրներին ու առաջադրանքներին, որոնց հիմնական նպատակը սովորածն ամրակայելու, կրկնելու և կիրառելու կարողությունների ձևավորումն է:

Խաղերի մեթոդիկան պահանջում է աշակերտներին նախապես ծանոթացնել խաղի բովանդակությանն ու հստակորեն բացատրել հանձնարարությունը: Երաժշտական խաղերն առաջին հերթին նպատակաուղղված

[5] https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-21/d6fd156bdaf6fb7eed3874e7794e9e43.pdf

են սովորողների երաժշտազգացողական դաստիարակությանը: Անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել ընկալել երաժշտության առանձնահատկությունները, նրանց ուշադրությունը հրավիրել երաժշտության արտահայտչամիջոցների վրա, սովորեցնել տարբերելու երաժշտական ստեղծագործության բնույթը և ժանրը: Երաժշտական խաղերն ունենում են համալիր ներգործություն: Ստորև նկարագրենք մի քանի խաղեր, որոնք կիրառվել են մեր կողմից դասապրոցեսի ընթացքում: Խաղերի կիրառման արդյունքները առավել մանրամասն կվերլուծենք հաջորդ գլխում:

1. «Ուշադրությո՛ն, հնչում է երաժշտություն»: Խաղը երեխայի մեջ զարգացնում է երաժշտությունը ուշադիր ունկնդրելու ունակություն, օգնում է հասկանալ դրա բնույթը, ընկալել սկիզբը, զարգացումը և ավարտը: Ընտրվում է երկու խումբ: Յուրաքանչյուր խումբ կանգնում է առանձին շարքով: Հնչում է քայլերգային երաժշտություն: Խմբերը պետք է ճիշտ ժամանակին սկսեն քայլել: Երբ երաժշտությունը փոխվում է, երեխաները պետք է կարողանան զգալ փոփոխությունը և իրենց շարժումներով հարմարվել նոր հնչող երաժշտությանը:
2. «Երգող աստիճաններ»: Ուսուցիչը խաղին մասնակից է անում այնքան երեխաների, որքան աստիճաններ են անցել անցել տվյալ ժամանակահատվածում: Երեխաները կանգնում են միմյանց կողքի, ըստ աստիճանների բարձրության և հաջորդականության՝ պահպանելով նաև ինտերվալային տարածություն, այսինքն՝ կես տոնի դեպքում երեխաներն ավելի մոտ են կանգնում միմյանց, քան մեկ տոնի դեպքում:

   Երեխաներից յուրաքանչյուրին տալով իր աստիճանի հնչողությունն ու անվանումը և այդպիսով «լարելով» երգող աստիճանները, ուսուցիչը կամ երեխաներից մեկը (որն ընտրված է իբրև ղեկավար) սկսում է նվագել: Նա դիպչում է ցանկացած երեխայի ձեռքին, և վերջինս վանկային անունով երգում է այն ձայնաստիճանը որը հանձնարարված է իրեն: «Երգող աստիճանների» օգնությամբ կարելի է «նվագել» հորինած փոքրիկ մեղեդիներ, առանձին մոտիվներ կամ անցած երգերը:[6]
3. «Կարճ և երկար տևողություններ»: Ուսուցիչը կարող է ընտրել որևէ երգ, որտեղ կան կարճ և երկար տևողության նոտաներ: Նա աշակերտներին առաջարկում է կարճ հնչյունների ներքո վազել, իսկ երկար հնչյունների ժամանակ քայլել:
4. «Մտածի՛ր և գուշակի՛ր» (երաժշտադիդակտիկ խաղ, 1-2-րդ դասարաններ) Խաղի պարագաներ՝ քարտեր, որոնց վրա պատկերված են թռչուններ, կենդանիներ: Խաղում են բոլոր երեխաները: Երեխաներին բաժանվում են մեկական քարտեր: Դաշնամուրով կամ նվագարկչով հնչում է թռչուններին կամ կենդանիներին բնութագրող երաժշտություն: Երեխաները պետք է կռահեն և բարձրացնեն այն

[6] Յու. Վ. Յուզբաշյան, Ա.Ա. Փահլեվանյան, Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում, ՈՒսուցչի մեթոդական ձեռնարկ, 2001թ.

բարտերը, որոնք համապատասխանում են հնչած երաժշտությանը: Այս խաղը երեխաների մեջ զարգացնում է տեմբրային զգացողությունը և ինքնուրույն մտածելակերպը:

5. «Վերելակ» խաղը նպաստում է երեխաների երաժշտական լսողության զարգացմանը: Առաջին շարքում նստածները երգում են ուսուցչի կողմից երգված ֆրազը: Երկրորդ շարքում նստածները նույնը երգում են ավելի բարձր նոտայից, երրորդ շարքում նստածները պետք է շարունակեն հաջորդ նոտայից, և այդպես շարունակ (3-4) նոտաներից: [7]

6. «Որոշիր երաժշտության տեսակները» աշակերտները կանգնում են երեք շարքով, յուրաքանչյուր շարք ստանում է իր անունը՝ երգ, պար, քայլերգ: Ամեն մի շարք, լսելով հնչող երաժշտությունը և ճանաչելով իրեն հանձնարարված տեսակը, սկսում է քայլել կամ երգել՝ կատարելով երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ: Այս խաղն օգնում է երեխաներին՝ տարբերելու երաժշտական ժանրերը (երգ, պար, քայլերգ): Խաղերի ընթացքում երեխաների մեջ ձևավորվում է նաև երաժշտական հնչյունների ճիշտ ընկալման կարողություն: Աստիճանաբար ի հայտ են գալիս ռիթմի զգացողության, հնչյունի բարձրության, տեմբրային գունավորման և ուժգնության նշանների տարբերակման հմտություններ:

[7] https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-21/d6fd156bdaf6fb7eed3874e7794e9e43.pdf

Խաղերի կիրառումը երաժշտության դասաժամերին

Աշխատանքը կրել է հետազոտական–գործնական բնույթ: Երաժշտական խաղերը կազմակերպվել են դասարանային պայմաններում, ուսումնական միջավայրում: Հետազոտության ընթացքում կիրառվել են ուսուցման ավանդական, ինտերակտիվ և խաղային մեթոդները զուգահեռ:

1. «Ուշադրությո՛ն, հնչում է երաժշտություն» խաղը կիրառվել է 2-րդ դասարանում «Ուր են տանում երգը, պարը, քայլերգը» թեմայի ամփոփման ժամանակ: Աշակերտները ուկնդրում են արդեն իրենց ծանոթ ստեղծագործությունները «Աղջիկների պարը» «Գայանե» բալետից, «Արջամուկը» Լյուդվիգ վան Բեթհովենից, Մ. Մազմանյանի «Կատվի պարերգը» «Ճուտիկ» օպերայից և «Որսկան ախպերը» Ա. Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայից և «Գովք Զամբարին» «Ճուտիկ» օպերայից: Դասարանը բաժանվել է 2 խմբի, խմբերը կանգնել են շարքերով և լսելով երաժշտությունը սկսել են քայլել՝ միաժամանակ իրենց շարժումները հարմարեցնելով փոփոխվող երաժշտությանը: Խաղը աշակերտներից պահանջում է մտքի ուժի լարում, ճկունություն, հնարամտություն և զուգահեռաբար նրանք սկսում են արժևորել իրենց ազգային և համամարդկային երաժշտական մշակույթը:
2. «Երգող աստիճաններ» խաղը կիրառվել է 3-րդ դասարանում «Իմ սրինգը» երգի ուսուցման ժամանակ: Ուսուցիչը ևս մեկ անգամ կրկնելով երեխաների հետ ձեռքի նշաններով երգեցողությունը, նրանց դասավորեց ըստ աստիճանների(նոտաների) և յուրաքանչյուրին տվեց լադի աստիճաններից հերթականը: Այնուհետև դաշնամուրով նվագեց «Իմ սրինգը» երգից մի հատված և հանձնարարեց աշակերտներին ըստ իրենց լադային աստիճանների նվագել երգը: Աշակերտները անմիջապես կարողացան գրեթե անսխալ կրկնել հանձնարարված հատվածը և մեծ ոգևորությամբ պահանջեցին հաջորդ հատվածի ուսկնդրում ևս: Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ մեկ լադի շրջանակներում սահմանափակումը վնասակար է երեխաների ընկալողունակության վրա, և ավելի արդյունավետ է լսողության զարգացումը տանել տարբեր լադերի հետ ծանոթացման միջոցով: Դա զարգացնում է հնչյունային լայն «տարածության» մեջ երեխաների ճիշտ կողմնորոշման ունակությունը:
3. «Կարճ և երկար տևողություններ»: Խաղը կիրառվել է 2-րդ դասարանում՝ «Երաժշտական հնչյունների տևողությունները.ռիթմ և պաուզա» թեմայի ուսուցման ժամանակ: «Քեռին եկավ մեր բակը» երգի ուսուցման ժամանակ աշակերտները երգը վերարտադրել են ծափերի միջոցով՝ ցույց տալով նոտաների տևողությունները և նրանց միջև գոյություն ունեցող պաուզաները (նկ1,2,3): Այս խաղը հնարավորություն է տալիս բոլոր սովորողներին ներառել ուսումնական պրոցեսում՝ բացառելով որևէ մեկի առաջնայնությունը, արդյունքում զարգացնելով խմբային մտածողությունը, կայացնել ինքնուրույն որոշումներ:

4. «Մտածի՛ր և գուշակի՛ր» խաղը կիրառվել է 3-րդ դասարանում Ս. Պրոկոֆիևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթի ուսուցման ժամանակ: Յուրաքանչյուր երաժշտական գործիքի հնչողությունը համապատասխանում է մեկ կենդանու ձայնի: Ցուցադրված քարտերի միջոցով աշակերտները գուշակում են երաշտական գործիքների անվանումները: Խաղը աշակերտների մեջ զարգացնում է ինքնուրույն մտածելակերպ, կողմնորոշվելու ունակություն, ձևավորում է երաժշտության նկատմամբ հուզական արձագանք, երաժշտական զգացողությունը, երաժշտության փոխաբերական ոլորտ հուզական ներթափանցման նրբությունները:
5. «Վերելակ» խաղը կիրառվել է 6-րդ դասարանում Կոմիտասի «Իմ չինարի յարը» երգի ուսուցման ժամանակ: Դասարանը բաժանվել է երեք խմբի և հանձնարարվել է երգը երգել յուրաքանչյուրը ավելի բարձր նոտայից: Կարևոր է աշակերտներին ներքուստ ներգրավված զգալ երաժշտական ստեղծագործության, գեղարվեստական կերպարի մարմնավորման գործընթացում: Խաղը երեխաների մոտ ձևավորում է գեղարվեստական կարեկցանքի, երաժշտության զգացողության, դրա հանդեպ սիրո, նրա գեղեցկությունը գնահատելու կարողության զարգացում, ստեղծագործական հուզական և գեղագիտական արձագանք արվեստի գործերին:

նկ.1

նկ.2 նկ.3

Եզրակացություններ

Ամփոփելով և վերլուծելով ստացված արդյունքները, կարող ենք փաստել, որ երաժշտական խաղերի կիրառումը երաժշտության դասաժամերին բերում է.

1. աշակերտների ստեղծագործական, գեղարվեստական և ճանաչողական կարողությունների զարգացման, որպես անձի ինքնագիտակցություն երաժշտության հետ հաղորդակցվելու գործընթացում.
2. արվեստի բնագավառում կրթության բովանդակությունը ոչ միայն ստեղծագործությունների տեղեկատվական-ճանաչային կողմերի զարգացումն է, ինչպես արվեստի գործերի, այնպես էլ աշխարհի, այլ մարդկանց հետ առնչվելու անհատական ձևի դաստիարակությունը:
3. երաժշտական խաղերը ներառում են երաժշտության և կյանքի միջև կապերի աստիճանական, ընդլայնվող և խորացող բացահայտում:
4. զգացմունքայինի և գիտակցության միասնության. երաժշտության ընկալումը երաժշտական մշակույթի ձևավորման հիմքն է: Նրա զարգացումը պահանջում է երաժշտության պատճառած

հուզական տպավորությունների գիտակցում, նրա արտահայտման միջոցներ: Այս սկզբունքի վրա ապավինելը թույլ է տալիս աշակերտներին զարգացնել իրենց ընկալածը գնահատելու կարողությունը և դրա միջոցով ձևավորելու իրենց հետաքրքրությունն ու ճաշակը:

5. Երաժշտական կրթության մեջ գիտելիքների, հմտությունների և կարողությունների, դիրքորոշման և արժեքների յուրացումն ու ձևավորումը իրականացվում է գեղարվեստական նյութի հիման վրա: Երաժշտական ստեղծագործությունների ընկալումը գործունեության բոլոր տեսակներում միշտ էլ յուրօրինակ է և ունի ստեղծագործական բնույթ:Ստեղծագործական կրթական գործունեությունը գիտելիքների յուրացման, հմտությունների ձևավորման, դիրքորոշման և արժեքների ողջ գործընթացն է, հետևաբար, առանձնանում է որպես ուսուցման ինքնուրույն տարր:Այն հնարավորություն է տալիս երեխաներին գիտակցել, որ հմտություններն ու կարողությունները,սեփական դիրքորոշումը և արժեքները անհրաժեշտ են սեփական կյանքի և ուսումնական նյութի միջև ուղիղ կապի ձևավորման համար:

6. Երաժշտական կրթությունը գտնվում է դինամիկ զարգացման վիճակում և կարիք ունի իր նպատակների, միջոցների, մոտեցումների, սկզբունքների և մեթոդների, երաժշտական կրթության և վերապատրաստման բովանդակության, նորարարական տեխնոլոգիաների կատարելագործման մշտական թարմացման: Որպեսզի նորարարական կրթական գործընթացն ավելի արդյունավետ դառնա, անհրաժեշտ են նոր գաղափարներ, հայեցակարգեր և մոդելներ՝ երաժշտական կրթության ինտեգրացիոն մոտեցում իրականացնելու, դպրոցականների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների մասին գիտելիքների ուսուցման և ձեռքբերման համար իրենց միասնության և փոխկապակցման մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Միրիջանյան «Երաժշտական խաղերը՝ որպես դեռահասի երաժշտական կարողությունների զարգացման լավագույն միջոց»,Նախաբավիդ 4.2016 էջ 29-34
2. Յու. Վ. Յուզբաշյան, Ա.Ա. Փահլևանյան, Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում, ՈԻսուցչի մեթոդական ձեռնարկ, 2001թ.
3. https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf
4. https://aspu.am/website/images/files/Manukyan%20Elen.pdf
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
6. https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-21/d6fd156bdaf6fb7eed3874e7794e9e43.pdf